ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ «ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ

02.02.2024 15:52

Հարգելի՛ փաստաբաններ,

05.02.2024թ. ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի դահլիճում տեղի է ունենալու վերապատրաստման դասընթաց **«Էլեկտրոնային եղանակով իրականացվող դատավարական փաստաթղթերի կազմում»** թեմայով:

- Դասընթացին մասնակցելու համար անհրաժեշտ է գրանցվել՝ մինչև 05.02.2024թ. ժամը 10:00-ն՝ պատասխան նամակ ուղարկելով training.coordinator@advocates.am էլեկտրոնային փոստի հասցեին, որտեղ անհրաժեշտ է նշել տվյալ դասընթացի թեման, Ձեր անուն, ազգանունը և արտոնագրի համարը,
- Յուրաքանչյուր դասընթացին մասնակցությունը կհաշվարկվի պարտադիր վերապատրաստման 4 (չորս) ակադեմիական ժամ:

Դասընթացի արդյունավետությունն ապահովելու համար յուրաքանչյուր դասընթաց կիրականացվի սահմանափակ թվով փաստաբանների մասնակցությամբ: Ուստի, մասնակցության հնարավորություն կունենան առաջին 200 գրանցվածները:

Դասընթացը տեղի կունենա նաև հեռավար ձևաչափով, որին միանալու հնարավորություն կունենան միայն մարզաբնակ փաստաբանները:

Միաժամանակ հայտնում ենք, որ հիշյալ թեմայով դասընթացները լինելու են շարունակական՝ հաշվի առնելով մասնակցության համար փաստաբանների մեծաթիվ հայտերը և մտահոգությունները թեմայի առնչությամբ:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })